*Հավելված 2*
*2025.30. 01-ին*
*կնքված* **ՆԴՏՊ-1141-11016/25L**
պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | <<Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ>> |
| **Դրամաշնորհի N** | **<<ՆԴՏՊ-1141-11016/25L >>** |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | <<Ընտանիք առանց բռնության>>ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2025-30.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | Երկրորդ եռամսյակ |
| **Ներկայացման օր** | 16.07.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Հայարփի Այդինյան<br>Ծրագրի ղեկավար |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը սպասարկել է 25 նոր շահառուների և 29 նախկին շահառուների, այս պահին կենտրոնի**

ծառայություններից օգտվում են ընդհանուր 24 կանայք և երեխաներ: Բոլոր շահառուները իրենց համար կազմված անհատական ծրագրով շարունակում են աջակցություն ստանալ: Կենտրոն դիմաց բոլոր շահառուներին տրամադրվել է օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալ-իրավական, սոցիալ-հոգեբանական աջակցություն, ինչպես նաև <<Թեժ գծի>> ծառայության մատուցում: Երկրորդ եռամսյակի ընթացքում Թեժ գիծ ծառայության միջոցով կենտրոնը աջակցություն է տրամադրել շուրջ 38 շահառուների: Այս եռամսյակի ընթացքում կենտրոնը տրամադրել է 38 առաջնային և 214 երկրորդային <<Թեժ գծի>> ծառայություն:

Հաշվետու ժամանակահատվածում 11 շահառուներ ստացել են իրավաբանական խորհրդատվություն, որոնցից 6-ի համար կազմվել է հայցադիմում մեր իրավաբանի կողմից, որոնք ընթացքի մեջ են: Կենտրոնի հոգեբանը սպասարկել է 23 շահառուների, որոնք ստացել են ինչպես անհատական, այնպես էլ ընդգրկվել են խմբային թերապևտիկ հանդիպումներում, որոնք կենտրոնը կազմակերպում է շաբաթական մեկ անգամ:

Այս եռամսյակում կենտրոնը իրականացրել է <<Տնտեսական հզորացման>> ծրագիրը, բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար: Հաշվետու ժամանակահատվածում այս ծրագրից օգտվել է 5 շահառու: Շահառուներին տրամադրվել է նաև գործիքներ, իրենց փոքր բիզնեսը սկսելու նպատակով, ինչպես նաև կենտրոնի մասնագետների կողմից տրամադրվել է անհրաժեշտ գիտելիքներ բիզնես ոլորտում մրցունակ լինելու համար:

Շարունակում ենք համագործակցությունները՝ ոստիկանության, ՄՍԾ-ի, Երևանում գործող <<Կանանց աջակցման կենտրոնի>>, մարզպետարանի՝ <<Կանանց և երեխաների պաշտպանության>> բաժնի, Վանաձորի, Սպիտակի և ըստ անհրաժեշտության մարզի միյուս համայնքներում գործող <<Հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովների>> հետ: Ըստ անհրաժեշտության համագործակցում ենք նաև այլ մարզերում գործող բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների /նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աջակցությունից օգտվել են 25 շահառուներ:

Այս եռամսյակի ընթացքում 3 շահառու օգտվել է ֆինանսական աջակցությունից:

Նախատեսվում է կազմակերպել սեմինարներ, որոնց նպատակն է հզորացնել և տնտեսապես անկախ դարձնել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և աղջիկներին՝ զարգացնելով նրանց կարողությունները, ինչպես նաև օգնել ձեռք բերել նոր մասնագիտություն և հմտություններ, ինչպես նաև << Կանանց տնտեսական հզորացման >> ծրագրի շրջանակներում նրանց նվիրել ենք մասնագիտական գործիքներ, աջակցել -ուղղորդել աշխատանք գտնելու հարցում: Այս ծրագրում ներգրավել ենք նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, բռնության ենթարկված և ամուսնալուծված կանանց: Այս տարի ծրագրից օգտվել է 12 կին:

Այս եռամսյակի ընթացքում մեր կազմակերպությունը օգնել է 3 շահառուի գտնել աշխատանք, նրանցից մեկը անելանելի դրության մեջ էր, նույնիսկ ինքնասպանության փորձ էր արել, այս պահին ունի աշխատանք, օգտվում է հոգեբանի ծառայությունից և գտնվում է կայուն հոգեվիճակում:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կազմակերպությունը ձևավորել է ինքնօգնության խումբ, որի նպատակն էր շահառուներին տալ հնարավորություն ինքնարտահայտվելու, իրենց փորձով կիսվելու: Նախաձեռնությունը բավականին

հաջողված էր, ինչը վկայում է շահառուների դրական արձագանքը: Նմանատիպ հանդիպումներ կկազմակերպվի ամիսը 1անգամ:

Մնացած դեպքերի հետ աշխատանքում չկան խոչընդոտներ, շահառուները իրենց համար կազմված ծրագրով ստանում են աջակցություն, կենտրոնի մասնագիտական թիմի կողմից: Որի նպատակն է ուժեղացնել շահառուներին, բարձրացնել իրավագիտակցությունը և ինքնագնահատականը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)

Համացանցում իրազեկող նյութերի տեղադրում: Լոռու մարզի տարբեր համայնքներում հանդիպումների կազմակերպում: Կենտրոնի գործունեության մասին իրազեկող թերթիկների տարածում քաղաքացիների շրջանում: Սեմինարների կազմակերպում տարբեր կառույցներում՝ ընտանեկան բռնության վերաբերյալ՝ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում իրազեկման արշավներ ենք կազմակերպել Լոռու մարզի՝ Տաշիր, Սպիտակ, Ստեփանավան և Վանաձոր համայնքում գործող Լոֆտ կառույցում իրականացրել ենք 3 հանդիպում:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած**

խնդիրները,որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Այս պահին ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտներ չկան:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցել նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում կշարունակենք աջակցության տրամադրումը նախկին և նոր շահառուների հետ,ինչպես նաև <<Թեժ գծի>> ծառայությամբ հայտնաբերված , ոստիկանության և այլ կառույցներից ուղղորդված բոլոր դեպքերի հետ:

2.5 Խնդրում ենք նշել ,Ձեր կողմից իրականացված այն գործողությունները,որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով,բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Այս տարվա ընթացքում նույնպես կենտրոնը կշարունակի << Կանանց տնտեսական հզորացման ծրագիրը >> , 2025 թվականի համար նախատեսվում է աջակցել թվով 12 շահառուների:

Այս եռամսյակի ընթացքում Գյումրիից, Երևանից, Վանաձոր տեղափոխված շահառուների համար կենտրոնի մասնագետները գտել են վարձով բնակարն, օգնել տեղավորվել աշխատանքի, ինչպես նաև կազմակերպել երեխաների դպրոց և մանկապարտեզ հաճախելու խնդիրները: 1 շահառուի կենտրոնի սոցալական աշխատողի ուղղորդմամբ ընդգրկվել է նպաստի համակարգում: 3 երեխաներ ուղղորդվել և

ընդունվել են ցերեկային կենտրոն: 3 շահառու ուղղորդվել և տեղավորվել են աշխատանքի: 1 շահառու ուղղորդվել է <<Վանաձորի հագեկան առողջության պահպանման>>կենտրոն: